ֆայ - Ղույի), որը յիշեցնում է Մէյսարի կամ Սապիանի և կամ սուրբ Գրիգորիսի վանքերի անունը, որին նուիրուած է եղել այս Խալֆայ—Ղույին, բայց վանքերի ամայութեան պատճառաւ այն հորը անցել է ուրիշի ձեռք, ինչպէս վկայեցին բնիկ Բագուեցիք և ցոյց տուին այն հորը, որը՝ տէրը յուսալի է, թէ ոչ ամբողջ հորը, գոնէ հորի բղխած նաւթից մի մասն յատկացնէ յօգուտ Ս. Էջմիածնի և Բագուի թեմի վանքերին, ըստ որում բարեպաշտ Հայը՝ որոյ ձեռքին է այն վանքական հորը, որը և նուիրել է իրեն պապը, չի կամենալ հեռացնել իսպառ վանքից և անհետացնել անունը, որ՝ ով գիտէ քանի հարիւր տարուց հետէ կրում է այդ անունը— Խալֆայ - Ղույի։ Այս մասին տեղեկութիւն ցանկացողը թող կարդայ Սարգիս եպիսկոպոս Ջալալեանցի ճանապարհորդութեան Բ. հատորն. յերես 405—410, որ ասէ « . . . դուրն նուիրեալ ի թագաւորաց Աղուանից յանուն սրբոյն Գրիգորիսի վանից ընկալեալ է ի վերջին ժամանակս զանուն Խալիֆայ Ղույի»։

ՀՐԱԲՈՒՂԽ ԲԱԳՈՒԱՅ

«406 . . . Ի Հնումն Պարսիկք և այժմ եկք ի Հնդկայ ձօնեն զպաշտօն կրակի։ . . . Հրաբուխս հեռի է ի քաղաքէն Բագուայ երկու մղոնաւ. ի կեդրոնի այնր տարածութեան են սենեակք հրապաշտից նման սենեկաց վանօրէից Հայոց։ Ի միում տան սահմանեալ կայ սեղանաձեւ աստիճան, յորս դասաւորեն մանր կուռք ոսկեղէնք և արծաթեղէնք, ուր ի մերձիւ հրոյ՝ վառեալ բորբոքի՝ և ի շօշափելն ձեռամբ՝ վերստին շիջանի։ Ի վերին ծայր նոյն իսկ տան ի ծխնելուզի՝ անշէջ մնայ նուիրական հուրն, առ որ ձօնեն զերկրպագութիւն։ Ի մէջ պարսպի սորա շինեալ կայ հոյակապ զանգակատուն ի վերայ չորից սեանց, ի վերայ որոյ են ծխնելոյզք. ուստի անդադար ելանեն ծծմբային օդք, ուր ի հանդիսաւոր աւուրս՝ հուր հարեալ բորբոքեն, որով և զգիշերն փոխեն արուեստաւոր տիւ։ Նոյնպէս յանկիւնս պարսպաց ի բուրգս նորին և ի խրճիթս քրմաց յօրինեալ կան նոյնպիսի խոռոչք, յորոց հանապազ արտաշնչէ ծծմբային գոլորշիք և ի հարկաւորեալ դէպս՝ հուր հարեալ վառեն, և երբ կամին շիջուցանեն։ Արտաքոյ պարսպի